

## ՀՀ-ում կոոպերատիվների կայուն զարգացմանն ուղղված իրավական մի շարք բարեփոխումների անհրաժեշտությունը

### Վարդան Ուռուտյան, Նարեկ Վարդանյան

Գյուղատնտեսական կոոպերատիվները զարգացող և զարգացած երկրներում հաջողությունների և ձախողումների երկար պատմություն ունեն: Ոլորտի մասնագետները, պաշտոնյաները և շահառու անձինք բազմիցս կարևորել են կոոպերատիվների դերը գյուղատնտեսության և գյուղի զարգացման գործում: Բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ միտված են եղել խթանելու կոոպերատիվների զարգացումը ՀՀ-ում: Այնուհանդերձ, այսօր կոոպերատիվները դեռևս մնում են թերզարգացած և հեռու են գյուղատնտեսական արժեքային շղթաների լիարժեք մասը համարվելուց: Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության՝ տարաբնույթ են, որոնք սակայն, կարելի է դիտարկել իրավական, տնտեսական, տեղեկատվական, երբեմն նաև՝ սոցիալ-հոգեբանական հարթություններում:

Սույն հոդվածում քննարկվել է ՀՀ-ում կոոպերատիվների կայուն զարգացմանն ուղղված մի շարք բարեփոխումների անհրաժեշտությունը՝ հիմնված եվրոպական և ասիական երկրների փորձի, կոոպերատիվների միջազգային ալյանսի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի և բազմաթիվ այլ կազմակերպությունների հետազոտությունների արդյունքների և առաջարկությունների վրա:

Մինչև 1999 թ. ՀՀ-ում գրանցված էր 297 սպառողական կոոպերատիվ: 2011թ. սեպտեմբերի դրությամբ վերագրանցվել էին 239 կոոպերատիվ, որոնցից 118-ը վերագրանցման փաստաթղթերում նշել են իրենց գյուղատնտեսական ուղղվածության մասին: Այսպիսով, կարելի է փաստել, որ ՀՀ-ում գրանցված են 239 սպառողական կոոպերատիվներ, որոնց մոտ 50 տոկոսը՝ գյուղատնտեսության ոլորտում: Իսկ թե իրականում քանիսն են այսօր գործում, դժվար է ասել<sup>1</sup>:

Ներկայումս ՀՀ-ում կոոպերատիվների ոլորտը կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքի կոոպերատիվների մասին հինգ հոդվածներով (հոդվածներ 117-ից 121) և Սպառողական կոոպերացիայի մասին 1993 թ. ընդունված օրենքով: Վերոնշյալ օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն:

Նախ կարելի է նշել, որ սպառողական կոոպերացիայի մասին օրենքի դրույթները չեն համապատասխանում սպառողական կոոպերատիվների մասին միջազգայնորեն ընդունված պատկերացումներին և սկզբունքներին: Միջազգայնորեն ընդունված չափանիշներով սպառողական կոոպերատիվները մատակարարման կոոպերատիվների յուրահատուկ տեսակ են: Որոշ դեպքերում այս կոոպերատիվները զբաղվում են մանրածախ և մեծածախ վաճառքով միայն: Այս կոոպերատիվների հիմնական նպատակը ֆերմերների կողմից գնումներ կատարելու գործընթացում խնայողությունների ապահովումն է: Ֆերմերների խնայողությունները գոյանում են ներդրանքների և ծառայությունների համեմատաբար մեծ ծավալների ձեռք բերման պայմաններում. ցածր գների ու փոխադրման նվազ ծախսերի, առավել կատարյալ տեխնիկական միջոցների ծանրաբեռնված օգտագործման և այլ նպաստող գործոնների արդյունքում: Իսկ սպառողական կոոպերատիվները շատ երկրներում հայտնի են որպես սննդամթերքի կոոպերատիվներ կամ բնական, էկոլոգիապես մաքուր սննդի խանութներ, որտեղ վաճառվում են անդամների աճեցրած գյուղատնտեսական մթերքները:

<sup>1</sup> Ըստ ՀՀ պետնեգիստրի տվյալների:

Օրենսդրական բարեփոխումները էական նշանակություն կունենան կոոպերատիվների զարգացման և կայունության համար: Կոոպերատիվների մասին համապատասխան օրենքների կարևորությանն անդրադառնալիս պետք է նաև նկատել, որ **օրենսդրական դաշտը անհրաժեշտ, սակայն, ոչ բավարար պայման է** կոոպերատիվների լիարժեք զարգացման համար: Ակնկալվող արդյունքների լիարժեքության համար առաջարկվող միջոցառումները մենք բաժանել ենք հետևյալ խմբերի.

- օրենսդրական բարեփոխումների իրականացում,
- տնտեսական խթանման մեխանիզմների կիրառում,
- կոոպերատիվի արժեքների և սկզբունքների մասին իրազեկության բարձրացում:

## Օրենսդրական բարեփոխումներ

Մասնագետների պնդմամբ, կոոպերատիվների զարգացումն անհնար է առանց համապատասխան օրենսդրական կարգավորումների: Կոոպերատիվների գրանցումից մինչև լուծարում ընկած գործառույթները պետք է կարգավորվեն օրենքով: Օրենքը պետք է սահմանի նաև կանոնների այն ընդհանուր շրջանակը, որի հիման վրա կոոպերատիվների հիմնադիր անդամները պետք է մշակեն կոոպերատիվի կանոնադրությունը և կոոպերատիվի ներքին կանոնակարգերը:

Ներկայումս կա միտում՝ ունենալու կոոպերատիվների մասին մեկ համապարփակ օրենք, որտեղ ներկայացված են կոոպերատիվների առանձին տեսակների առանձնահատկությունները: Ըստ Կոոպերատիվների միջազգային այլաձևի (ԿՄԱ) մասնագետների՝ կոոպերատիվների մասին մեկ, գլխավոր օրենքը ստեղծում է հավասար պայմաններ, նվազեցնում զեղծարարությունների հնարավորությունները և ավելի մեծ տեղ հատկացնում կոոպերատիվների կանոնադրությանը<sup>2</sup>:

*Չիմնվելով ուսումնասիրված երկրների, ինչպես նաև ԿՄԱ-ի փորձի վրա՝ առաջարկում ենք ՀՀ-ում ընդունել կոոպերատիվների մասին համապարփակ և ընդգրկում մեկ գլխավոր օրենք, իսկ կոոպերատիվների առանձին տեսակների մասին դրույթները ընդգրկել այդ օրենքում:*

Օրենքի հիմքում պետք է ընկած լինի ԿՄԱ-ի կողմից սահմանված կոոպերատիվների հանրահայտ յոթ սկզբունքները.

1. Կամավոր և բաց անդամություն,
2. Անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկում,
3. Անդամների տնտեսական մասնակցություն,
4. Ինքնավարություն և անկախություն,
5. Կրթություն, վերապատրաստում և տեղեկացվածություն,
6. Համագործակցություն կոոպերատիվների միջև,
7. Համայնքի մասին մտահոգվածություն<sup>3</sup>:

Յուրաքանչյուր կոոպերատիվ մինչև իր գործառույթներին անցնելը պետք է գրանցվի և ստանա իրավաբանական անձի կարգավիճակ: Հետաքրքիր օրինակ է ներկայացնում Ֆիջիի օրենքը, համաձայն որի, եթե գրանցող մարմինը կասկածներ ունի կոոպերատիվի ռազմավարության և նպատակային գործունեության վերաբերյալ, ապա կարող է իրականացնել փորձաշրջանով գրանցում՝ առավելագույնը երկու տարով: Երկու տարվա ընթացքում իրականացված մշտադիտարկման արդյունքներով որոշվում է, թե արդյո՞ք կոոպերատիվը համապատասխանում է ներկայացված կանոնադրական նպատակներին և իրականացնում անդամների շահերից բխող գործունեություն, թե ոչ: Պահանջները

<sup>2</sup> [www.ica.coop](http://www.ica.coop)

<sup>3</sup> Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Երևան, 2011:

բավարարելու դեպքում կոոպերատիվին շնորհվում է ամբողջական կարգավիճակ, հակառակ դեպքում՝ հայտը մերժվում է:

Բազմաթիվ երկրներում կոոպերատիվները ազատված են գրանցման համար անհրաժեշտ վճարներից և տուրքերից: ՀՀ-ում սպառողական կոոպերատիվ գրանցելու, ինչպես նաև կոոպերատիվի անդամների թվաքանակի փոփոխության համար նախատեսված են համապատասխանաբար 10000 և 5000 դրամ պետական տուրքեր: Կոոպերատիվում յուրաքանչյուր նոր անդամի գրանցումը համարվում է փոփոխություն և հանգեցնում է 5000 դրամի վճարման: Այս հանգամանքից ելնելով կոոպերատիվները հակված չեն գրանցելու իրենց նոր անդամներին:

*Հետևելով միջազգային միտումներին՝ առաջարկվում է վերացնել կոոպերատիվների գրանցման, փոփոխությունների, ինչպես նաև կնիքի համար անհրաժեշտ տուրքերն ու վճարները:*

Կոոպերատիվների՝ մեր կողմից առաջարկվող օրենսդրական բարեփոխումները ներառում են հետևյալ դրույթները.

#### ▪ Կոոպերատիվների սահմանումը

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի համաձայն, կոոպերատիվը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված միավորում է:*

Մեր ուսումնասիրությունների համաձայն, երբ իրավաբանական անձանց՝ կոոպերատիվի անդամներ դառնալը հղի է բազմաթիվ բարդություններով, որի պատճառով էլ հիմնականում սահմանափակված է իրավաբանական անձանց անդամությունը: Օր., մեր երկրի օրենսդրության համաձայն, երկու ՍՊԸ-ներ կարող են կազմավորել կոոպերատիվ. սա, կարծում ենք, ավելի մոտ է ընկերակցությունների (ասոցացիաների), միությունների, քան՝ կոոպերատիվների սկզբունքներին:

*Առաջարկվում է հանել իրավաբանական անձանց անդամության հնարավորությունը:*

#### ▪ Կոոպերատիվի հիմնադրումը

Սպառողական կոոպերացիայի մասին ՀՀ օրենքի երկրորդ հոդվածի համաձայն՝ սպառողական ընկերությունը երեսունից ոչ պակաս անձանց կամավոր միավորում է: Կառավարության առաջարկությամբ ներկայումս առաջին ընթերցմամբ ընդունվել է «երեսունից ոչ պակաս» դրույթի հանումը օրենքից: Առաջարկի գաղափարը ողջունելի է, սակայն, «երեսունից ոչ պակաս» դրույթի հանումը հարցի լուծման միայն մի մասն է: Երկրորդ մասով պետք է սահմանել, թե նվազագույնը քանի անդամ կարող է կազմավորել կոոպերատիվ:

*Մեր կարծիքով, անդամների նվազագույն թիվը պետք է լինի հինգը, որը հնարավորություն է կտա ձևավորելու անհրաժեշտ կառավարման մարմիններ:*

Կոոպերատիվների ֆինանսական կայունությունն ապահովելու համար պետք է սահմանել կոոպերատիվների կանոնադրական կապիտալ իր նվազագույն սահմանով: Այդ կանոնադրական կապիտալը պետք է ձևավորվի կոոպերատիվի անդամների փայավճարների միջոցով: Սահմանաչափը տարբերվում է տարբեր երկրներում, օրինակ՝ Եվրամիության կոոպերատիվների կանոնադրության համաձայն՝ այն սահմանված է երեսուն հազար եվրո<sup>4</sup>: Եվրոպական երկրներից Բելգիան, օրինակ, սահմանել է 18550 եվրո սահմանաչափ, Լատվիան, էստոնիան և Չեխիան համապատասխանաբար՝ 2850, 2500 և 2000 եվրոյին համարժեք գումար:

4 The Statute for a European Cooperative Society (Societas Cooperativa Europaea – SCE), 2003.

Կոոպերատիվների մասին ՀՀ օրենսդրական դրույթներում հստակ սահմանված չեն կոոպերատիվների իրավական կարգավիճակի փոփոխության դրույթները: Քանի որ կոոպերատիվները էականորեն տարբերվում են այլ տնտեսավարող իրավաբանական ձևերից և ունեն հատուկ կարգավիճակ, կոոպերատիվների փոխակերպումը այլ իրավաբանական անձի պետք է սահմանափակել՝ հնարավոր չարաշահումներ և զեղծարարություններ թույլ չտալու համար:

#### ▪ Կոոպերատիվի անդամները

Կոոպերատիվի հիմնական նպատակը իր անդամների շահերի բավարարումն է: Կոոպերատիվի անդամների որոշմամբ, կոոպերատիվը կարող է ապրանքներ ու ծառայություններ մատուցել նաև ոչ անդամներին՝ ապրանքաշրջանառության և արտադրության ծավալների ավելացմամբ շոշափելի տնտեսումների հասնելու և ֆինանսական կայունության ապահովման նպատակով<sup>5</sup>: Սակայն այդ ծառայությունների տեսակարար կշիռը պետք է լինի սահմանափակ և կոոպերատիվը իր հիմնական ծառայությունները պետք է նպատակաուղղի իր անդամների շահերին: Աշխատանքային գործունեության տեսակարար կշիռը անդամների և ոչ անդամների միջև պետք է հստակ սահմանված լինի կոոպերատիվի կանոնադրությամբ:

Կոոպերատիվի անդամը, սեփականատեր հանդիսանալուց բացի, պետք նաև մասնակցի կոոպերատիվի կառավարմանը և օգտվի կոոպերատիվի ծառայություններից: Անհմաստ է ունենալ ոչ նվիրված անդամներ, ովքեր նաև կոոպերատիվի ծառայություններից ոչ ակտիվ օգտվողներ են: Պասիվ անդամները նսեմացնում են կոոպերատիվի դերը և թուլացնում գործակցության ոգին:

Ճապոնական մոդելի վրա հիմնվելով՝ մենք առաջարկում ենք ներառել հետևյալ դրույթը, որն ուղղված է արհեստական կոոպերատիվների կանխարգելմանը.

*Եթե անդամը չի օգտագործում կոոպերատիվը մեկ տարի ժամկետով, նա կարող է հեռացվել կոոպերատիվից:*

Այսօր, կոոպերատիվների ֆինանսական խնդիրների լուծման համար բազմաթիվ երկրների օրենքներ թույլ են տալիս կոոպերատիվներին ունենալու ներդրող անդամներ, որոնք, վճարելով համապատասխան վճարներ, իրավունք են ստանում օգտվելու կոոպերատիվի ծառայություններից: Միաժամանակ, ներդրող անդամները չպետք է ունենան ձայնի իրավունք և չպետք է մասնակցեն ընկերության կառավարմանը:

#### ▪ Կոոպերատիվի կառավարման մարմինները

Կոոպերատիվի գործունեության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է կոոպերատիվի կառավարմանը դրա անդամների մասնակցությունից: Կոոպերատիվը պետք է ունենա պարտադիր և կամավոր կառավարման մարմիններ: Ներկայումս կոոպերատիվների կառավարումը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 119-րդ հոդվածով և Սպառողական կոոպերացիայի մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, որոնք, սակայն, ոչ լիարժեքորեն են սահմանում կառավարման մարմինների գործառույթները: Մասնավորապես, ոչ հստակորեն են ներկայացված կոոպերատիվի գործադիր և վերահսկիչ մարմինների գործառույթները:

*Առաջարկվում է հստակ սահմանել կոոպերատիվի կառավարման պարտադիր և կամավոր մարմինների գործառույթները, ձևավորման կարգը և պարտականությունները, ինչպես նաև, համապատասխան հանձնաժողովների ձևավորման հարցերը:*

#### ▪ Կոոպերատիվի ֆոնդերը և կարգավիճակը

<sup>5</sup> Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Երևան, 2011:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածով կոոպերատիվը կարող է ունենալ անբաժանելի ֆոնդեր: Տվյալ հոդվածից բխում է, որ կոոպերատիվները կարող են նաև չունենալ անբաժանելի ֆոնդեր:

Անբաժանելի ֆոնդերը հանդիսանում են կոոպերատիվների կայունության երաշխիք և օգտագործվում են կոոպերատիվի կորուստները ծածկելու համար: Անբաժանելի ֆոնդերը չեն բաժանվում անդամների միջև և անձեռնմխելի են կոոպերատիվի գոյության ընթացքում:

Մեր ուսումնասիրած եվրոպական և ասիական թերևս բոլոր երկրների կոոպերատիվների օրենքներում հստակ ամրագրված է, որ կոոպերատիվների անբաժանելի ֆոնդերը պարտադիր են և ենթակա չեն հարկման: Կոոպերատիվը չնախատեսված ռիսկերից ապահովագրելու համար տարբեր երկրներ սահմանել են անբաժանելի ֆոնդերի նվազագույն դրույքաչափեր՝ տարեկան շահույթի 5-30%-ի չափով<sup>6</sup>: Օր., Չեխիան և Բելգիան սահմանել են 10% դրույքաչափ այնքան ժամանակ, մինչև անբաժանելի ֆոնդը կհավասարվի կանոնադրական կապիտալի կեսին: Ավելի նախընտրելի է Լեհաստանի օրինակը, որտեղ անբաժանելի ֆոնդը սահմանված է շահույթի 5%-ի չափով՝ այնքան ժամանակ, մինչև այն կհավասարվի կանոնադրական կապիտալին<sup>7</sup>:

*Առաջարկվում է անբաժանելի ֆոնդերը կոոպերատիվների համար դարձնել պարտադիր և սահմանել նվազագույն շեմ տարեկան շահույթի 5%-ի չափով՝ մինչև կանոնադրական կապիտալի չափին հասնելը:*

Անբաժանելի ֆոնդերից բացի կոոպերատիվները կարող են ունենալ նաև այլ ֆոնդեր, օր.՝ պահուստային և (կամ) բոնուսային, որոնց տնօրինումը պետք է սահմանվի կոոպերատիվի կանոնադրությամբ:

Կոոպերատիվների զարգացման ռազմավարությունը քննարկելիս հատկանշական է մեկ կարևոր հանգամանք, որը էականորեն խոչընդոտում է կոոպերատիվների զարգացմանը: Սպառողական կոոպերատիվները, լինելով ոչ առևտրային կազմակերպություններ, չեն կարողանում բանկերից ստանալ բիզնես վարկեր, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում վերջիններիս զարգացման համար:

*Կոոպերատիվների կարգավիճակը պետք է փոխվի և հնարավորություն տրվի դրանց որակավորվելու և ստանալու բիզնես վարկեր:*

#### ▪ Կոոպերատիվների հարկումը

Հաշվի առնելով կոոպերատիվների սոցիալական բաղադրիչը և դրանց բարենպաստ գործունեությունը ի շահ համայնքների զարգացման՝ բազմաթիվ պետություններ սահմանել են հարկային արտոնություններ կոոպերատիվների համար:

ՀՀ-ում ԱԱՀ-ի չհարկվող շեմի չափը կոոպերատիվների անդամների թվից կախվածության մեջ դնելու պահանջը համապատասխան օրենսդրական փոփոխություն է պահանջում: Գործող օրենսդրությունը («ՀՀ ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով ԱԱՀ-ի հարկման 58.35 մլն դրամ նվազագույն շեմի սահմանումը) չի նպաստում կոոպերատիվների ձևավորմանը:

Հիմնականում կոոպերատիվները հարկվում են անդամների եկամուտների մակարդակով, իսկ անբաժանելի ֆոնդերին ուղղված մասհանումները ազատված են հարկերից: Օր., Յուլանդիայում կոոպերատիվները համարվում են համընդհանուր կապիտալով ընկերություն, որը նշանակում է՝ անդամներին հատկացվող շահութաբաժինները ազատված են հարկերից, Լիտվայում եթե կոոպերատիվի եկամուտների առվազն 50%-ը

<sup>6</sup> Իտալիայի կոոպերատիվների մասին օրենքը կոոպերատիվներին պարտադրում է ստեղծել անբաժանելի ֆոնդեր շահույթի 30%-ի չափով:

<sup>7</sup> Euricse, Study on the implementation of the Regulation 1435/2003 on the statute for SCE, 2010.

գալիս է գյուղատնտեսական գործունեությունից, ապա դրանց տրվում են հարկային արտոնություններ, Իտալիայում կոոպերատիվի ֆոնդեր կատարվող մասհանումները ազատվում են հարկերից, իսկ անդամների եկամտահարկը զգալիորեն նվազեցված է, Ֆրանսիայում սպառողական կոոպերատիվները ազատված են հարկերից, եթե հիմնականում գործակցել են անդամների հետ:

*Կոոպերատիվները համարվում են շահույթ հետապնդող կազմակերպություններ, սակայն, միևնույն ժամանակ, դրանց տրված են զգալի հարկային արտոնություններ:*

#### ▪ **Կոոպերատիվների մոնիթորինգը**

Ուսումնասիրված թերևս բոլոր երկրների կոոպերատիվների մասին օրենքներում ամրագրված պարտադիր աուդիտը հետապնդում է մեկ նպատակ՝ համոզվելու, որ կոոպերատիվները պահպանում են սահմանված «խաղի կանոնները»: Կոոպերատիվների աուդիտը հիմնականում տարանջատված է պետական գործառույթներից և իրականացվում է կոոպերատիվների միությունների կողմից, օր.՝ Սերբիայում, Լեհաստանում, Դանիայում և այլուր: Այլ դեպքերում աուդիտը իրականացվում է անկախ աուդիտորական կազմակերպությունների, նախարարությունների հատուկ ստորաբաժանումների կամ ընկերակցությունների կողմից: Քանի որ ՀՀ-ում կոոպերատիվների ոլորտը դեռ կայացման փուլում է, տվյալ դեպքում մոնիթորինգի նպատակը ոչ թե կոոպերատիվների հանդեպ տույժերի ու տուգանքների կիրառումն է, այլ դրանց աջակցությունը և ճշգրիտ ուղղորդումը:

*Ամենամյա մոնիթորինգը պետք է լինի պարտադիր՝ համոզվելու համար, որ կոոպերատիվները պահպանում են ընդունված սկզբունքները և գործում են թափանցիկ: Այն պետք է ունենա խորհրդատվական բնույթ, և լինի տարանջատված այլ ընկերությունների համար իրականացվող աուդիտային ծառայություններից:*

### **Տնտեսական խթանիչ մեխանիզմների կիրառում**

Ինչպես արդեն նշվեց, կոոպերատիվների մասին օրենսդրական բարեփոխումների իրականացումը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է կոոպերատիվների զարգացման համար: Կոոպերատիվների զարգացման կարևորագույն բաղադրիչը դրանց տնտեսական կայունությունն է, որն ապահովվելու համար նույնպես անհրաժեշտ են որոշակի քայլեր:

Պետական գնումների համակարգը կարող է խթանիչ լծակ հանդիսանալ կոոպերատիվների համար, որոնք այսուհետ պետք է ընկալվեն որպես **գործընկերներ**: Պետական աջակցության ծրագրերը պետք է ուղղորդվեն գյուղատնտեսական կոոպերատիվների ամրապնդմանը, մասնավորապես՝ վարկային ծրագրերը, մրցակցային դրամաշնորհային ծրագրերը, ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրեր և այլն:

Հաշվի առնելով կոոպերատիվների սոցիալական բաղադրիչը՝ բազմաթիվ երկրներում, օր.՝ Իտալիայում, դրանց տրվում են առավելություններ պետական կարիքների բավարարման համար անցկացվող մատակարարման մրցույթներում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կոոպերատիվները կարող են պետության համար արդյունավետ գործընկերներ լինել և մասնակցել բազմաթիվ սոցիալական ծրագրերի իրականացմանը: Շատ հաճախ նման գործընկերությունը կոոպերատիվների տնտեսական զարգացման շատ ավելի հզոր լծակ է հանդիսանում, քան պետության կողմից տրամադրվող միակողմանի օգնությունը:

## Կոոպերատիվների արժեքների և սկզբունքների մասին տեղեկացվածության բարձրացում

ՄԱԿ-ի կողմից 2012 թվականը հայտարարվել է կոոպերատիվների միջազգային տարի: Սա նպաստավոր առիթ է համախմբելու պետության և շահառու կազմակերպությունների ուժերը՝ ամրապնդելու հասարակության մոտ կոոպերատիվ արժեքների կարևորությունը: Կոոպերատիվների մասին թյուր պատկերացումները և կարծրատիպերը հաճախ կոոպերատիվների անհաջողության հիմնական պատճառներից են:

Պետական և շահառու կազմակերպությունների աջակցության հետ մեկտեղ, կոոպերատիվների ամենահզոր ռեսուրսը կոոպերատիվի անդամներն են, ուստի կոոպերատիվների սկզբունքների և արժեքների մասին քարոզչությունը և տեղեկացվածության բարձրացումը հաջողության հասնելու ամենակարևոր պայմաններից են:

Հուլիսի առաջին շաբաթ օրը ՄԱԿ-ի կողմից նշվում է որպես կոոպերատիվների միջազգային օր: Գյուղատնտեսության նախարարության և այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից այդ օրը պատշաճ ձևով նշելը էականորեն կբարձրացնի հասարակության վստահությունը կոոպերատիվների և դրանց սկզբունքների նկատմամբ:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Երևան, 2011:
2. ՀՀ պետական ռեգիստրի տվյալներ, 2011:
3. Antonio Fici, Italian Cooperative Law Reform and Cooperative Principles, Euricse, Italy, 2010.
4. Armenian Law on Consumer Cooperatives.
5. A Study of Cooperative Legislation in Selected Asian and Pacific Countries, FAO.
6. CA, The Austrian cooperative law in a changing world of times, framework since 1873, European research conference, Lion.
7. Cooperative Society Act, 1973.
8. H. Henry, Guidelines for Cooperative Legislation, ICA, 2001.
9. ICARE Country Report, 2010.
10. Kimberley A. Zeuli and Robert Cropp, Cooperative Principles and Practices in 21st Century, 2004.
11. Legal Framework for Social Enterprises in Serbia, Grupa 484, Belgrade, 2011.
12. National Statistical Service of Armenia, 2010.
13. Ninoslav Kekic, Ministry of Economy of Serbia, Presentation of a New Law.
14. Recommendation R193, The General Conference, ILO, 2002.
15. Study on the implementation of the Regulation 1435/2003 on the Statute for European Cooperative Society, Euricse, 2010.

16. Supportive Environment for Cooperatives, Report on an Expert Group Held in Ulaanbaatar, Mongolia, UN, 2002.
17. [www.ica.coop](http://www.ica.coop)
18. [www.coopac.coop/idc/](http://www.coopac.coop/idc/)
19. [www.ilo.org/public/english/employment/ent/papers/favclim.htm](http://www.ilo.org/public/english/employment/ent/papers/favclim.htm)